

համար կանուխէն Յակոբ կաթողիկոսի աչքէն ինկած էր: Արդէն ժողովուրդին ալ սիրելի չէր, պարտքերէ ճնշուած՝ կեղեքումներու դիմելուն համար: Ուստի՝ Յակոբ դիւրաւ կրցաւ զայն պաշտօնանկ ընել և Սարգիս Թէքիրտաղցին վերահաստատեց իր պաշտօնին մէջ՝ իբր պատրիարք:

Ինչպէս կը թուի, Յովհաննէս Թիւթիւնճի չառ լաւ անուն մը չէ ձգած Պոլսոյ մէջ, վասնզի Երեմիա Չէլլայի Քէօմիւրճեանի պէս լրջամիտ մէկը 1670ին իր մէկ նամակին մէջ (տես Օրագրութիւն, էջ 406) գովելով Ստեփաննոս Մեղրեցին՝ կ'ըսէ. «զի ոչ է համեմատ Ղազար(1) եւ Թութունճի(2) եւ Սարգիս 3) վասթարացն, զորս դու իմենին զգիտութիւնդ քաջ ծանուցիր ազգիս համայնի ի ձեռն ջատագովութեանց այդորիկ՝ ընտելով քաղաքանն եւ զանաւորանն, զիսելով զչարն եւ զբարին, որոշել զլոյսն եւ զխաւարսն, սիրելով զլաւն եւ ասելով զվասթարն, բացայայտելով զդաւն ի քաղցր լսելով մարգարէին...»: Բայց, ինչպէս տեսնուեցաւ, Յովհաննէս Թիւթիւնճի յուսահատող անձ մը չէր: Համոզուած, թէ Պոլսոյ մէջ ասպարէզ չկար այլեւս իրեն համար, կը գառնայ Վասպուրական՝ իր հայրենական գաւառը և կը մօտէ Աղթամարի կաթողիկոսին իրաւասութեան տակ, գուցէ էջմիածինի հետապնդումէն ազատ մնալու և իր նուիրակութեան հաշիւները չաւալու համար:

Հոն, ինչպէս կ'երեւայ, յաջողած է նոյնիսկ կաթողիկոս դառնալ Աղթամարի — գուցէ հակաթոռ — ինչպէս նաև Առաջնորդ Վանի քաղաքին և հետեւա-

(1) Սեբաստացի:

(2) Յովհաննէս Թութիւնճի:

(3) Թէքիրտաղցի: